

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ափսոս Մարտին:

Ափսոս, որ ավագները մեր գլխից պակասում են: Ափսոս շքեղ Յամոն, ափսոս սթափ ու քաջ Կահագնը, ափսոս պայծառ հոգու Յաչը, իշխան Սերոն ափսոս, ափսոս Եմինը, և Մարտին, Մարտին, թխամայր Մարտին ափսոս՝ որ ծագերիս վրա արժիվ էր կտրում, որ հեքիարի Մանուշ քույրիկի նման եղբոր որը ծեռքը բռնած ճամփա էր ընկել այն իհն, հեքիաթային, մեր մայրերի ժամանակներում, և աղջնակի իր քայլը եղբոր քայլից միշտ առաջ էր լինելու հեքիաթային կյանքի այդ ճանապարհին, վտանգի առաջ թևերը փոշելու էր եղբոր վրա, որովհետև աղջնակը ինքն էր, որովհետև աղջնակ չէր՝ մայր էր, որովհետև սահմանված է այդպես:

Պոետի ու աղջնակի նրա հոգում հորինվել էր թե ինքն ու իրենք, ինքն ու մենք բոլորս կավից չենք հունցված, այլ երկնքի աստղափոշուց. աստղափոշուց ստեղծված այդ աղջնակն ու պոետը զորում էր ուրանալ կավը իր և մեր մեջ և երկրավորի իր և մեր ճանապարհը երկնավորի էր տեսնում, և քայլը՝ մեզնից միշտ մի քիչ առաջ, քրոջ, աղջնակի, թխամոր թևերը վտանգի առաջ ու վտանգից էլ առաջ մեր վրա փռած՝ եթե անգամ որբեր ու եղբայրներ չենք, եթե անգամ իրենից տասնապատիկ զորեղ էինք, եթե ամենակին էլ աստղափոշուց չենք ստեղծված, այլ հունցված էինք ծանր ու թանձր անթրափելի կավից:

Ափսոս Մարտին: Յանդուրժման ու սիրո ծարավի հողեղեններիս այսօրվա երթի գլխին հոգնած այդ թևերը չէ՛, որ պիտի գոցվեին, կորովի ու քաջ այդ եղթյունը չէ՛, որ պիտի մարտեր մեր երթի մեջ:

Եվ յուրաքանչյուրիս ու բոլորիս մեջ, քանի դեռ կանք՝ թող ապրի, տագնապի ու հերոսանա հեռու ճանապարհների այն աղջնակը, որ եղբոր ծեռքը բռնած ճանապարհ էր ընկել, որովհետև բոլորս ենք իսկապես եղբայրներ, բոլորս ենք նրա թևերի պաշտպանությունը ուզում: